



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՎ 1, Դեկտեմբեր 2025



ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ՝ ԿԵԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՂ ՈՒՂԵՑՈՅՑ

Աստուածաշունչը սովորական գիրք մը չէ, այլ Աստուծոյ կենդանի խօսքը, որ կը բացայայտէ Իր կամքը, Իր սէրը եւ Իր փրկագործութեան խորհուրդը: Ան մեր հաւատքի հիմքն է, մեր ժողովուրդի հոգեւոր կեանքի մշտադիւրդ եւ մեր ազգային ինքնութեան ամրակոտ նեցուկը:

Հայ Եկեղեցին իր հիմնադրման առաջին օրերէն սկսած՝ Աստուծոյ խօսքի ընթերցումը, ուսուցումն ու տարածումը իր առաքելութեան հիմնասիւնը նկատած է: Սուրբ Գրիգոր Լուսատւիչ, գիշեր ու ցերեկ Աստուածաշունչը իրացուցած, իր իսկ կեանքի օրինակով վկայակոչած է այն խօսքը, զոր կը կարդանք Սաղմոսներուն մէջ: «Տիրոջ օրէնքը սերտէ գիշեր ու ցերեկ» (Սաղմ. 1.2):

Հայ եկեղեցական գիրքերը՝ Կանոնագիրքն ու Մաշտոցը, Յայսմաւորքն ու Վարք Սրբոցը, մեր հայրերու եւ վարդապետներու գրութիւնները, հարուստ վկայութիւններ են այն մասին, թէ որքան խորապէս Աստուծոյ խօսքը արմատացած է հայ կեանքին մէջ:

Մեծն Ներսէս Լամբրոնացի նոյնպէս գիշեր ու ցերեկ իրացուցած է Սուրբ Գիրքը, առանց հանգստանալու: Ս. Գրիգոր Վկայասէր կաթողիկոս միշտ «Սուրբ Գիրքի ընթերցանութեամբ եւ աստուածաբարբառ աղօթքներով» իր օրերը լեցուցած է:

Յովհաննէս Երզնկացի Պուգ վարդապետը անգիր գիտէր Աստուածաշունչը, իսկ Սուրբ Գրիգոր Տաթեւացին, դեռ 14 տարեկանին իսկ կը մեկնաբանէր Սուրբ Գիրքը այլոց համար: Այս բոլոր վկայութիւնները ցոյց կու տան, թէ մեր նախահայրերը Սուրբ Գիրքը չեն դիտած իբրեւ սովորական հնամաշ գիրք մը, այլ իբրեւ կենդանի խօսք եւ աստուածային շունչ, որ կը զօրացնէ եւ կը լուսաւորէ:

Սակայն պատմութեան ընթացքին եղած են ժամանակներ, երբ հոգեւոր զարթօնքին յաջորդած են անտարբերութեան ժամանակներ: Առաքել Դարիժեցին իր ժամանակի մասին կը գրէ, թէ ժողովուրդը հեռացած էր Սուրբ Գիրքէն, եւ այդ պատճառով հաւատքը տկարացած էր եւ բարքերը աղաւաղուած: Ան կ'ըսէ. «Գիրքերը փակուած էին ու լռած, որովհետեւ մարդիկ զանոնք արհամարհած էին: ...Ո՛չ Գիրքը կը ճանչնային, ո՛չ Գիրքերուն զօրութիւնը»:

Այսօր եւս հեռու չենք նման իրավիճակներէ, յաճախ մեր ուշադրութիւնը այլ արժէքներու վրայ կը կեդրոնանայ՝ նիւթական շահի, փառքի եւ կամ ժամանակաւոր հաճոյքներու: Բայց երբ Աստուծոյ խօսքը տեղ չունի մեր կեանքին մէջ, կը նշանակէ որ մեր սրտին, խղճին եւ հոգիին ճայնը լռած է եւ կամ գիտակցաբար կը լռեցնենք:

Այսօր անելի քան երբեք, անհրաժեշտ է վերագտնել Աստուածաշունչին հանդէպ մեր սէրն ու պապակը: Աստուածաշունչը պէտք չէ մնայ գրադարանի մէջ զետեղուած զարդագիրք մը, այլ դառնայ մեր ամէնօրեայ կեանքի մնայուն ուղեկիցը: Անոր մէջ փնտռենք Աստուծոյ կամքը՝ մեզ առաջնորդող, խրատող, մխիթարող եւ մեր մտքերն ու սրտերը մաքրագործող:

Աստուծոյ խօսքը կեանք կու տայ այն անձին, որ կը լսէ զայն եւ կը գործադրէ: Ինչպէս Պօղոս Առաքեալ իր աշակերտին՝ Տիմոթէոսին ուղեւոր իր խօսքը կը թելադրէ հետեւեալով ըսելով. «Հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով... Ուշադիր եղիր՝ թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այդպէս մնա, գիտնալով որ այդ ձեռով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները» (Ա Տիմ. Դ. 13-16):

Թող Սուրբ Գիրքի ընթերցումն ու ուսուցումը վերակենսատրէ մեր կեանքը: Թող իրաքանջիւր հայ ընտանիք ունենայ իր Սուրբ Գիրքը՝ բաց, ընթերցելի եւ սիրելի: Ինչպէս սաղմոսասաց վարդապետը կը հաստատէ. «Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող՝ ճամբաներուս:» (Սաղմ. 119. 105)

Թող Աստուծոյ խօսքը մեր հոգեւոր մնայուն սնունդը դառնայ, մեր մշտադիւր ճշմարիտ լոյսը եւ մեր ԿԵԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՂ ՈՒՂԵՑՈՅՑԸ:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տարին հասած է իր աւարտին եւ մեր դիմաց կը բացուի նոր էջ մը, կեանքի նոր հանգրուան մը՝ նոր յոյսերով ու օրհնութիւններով:

Պահ մը կանգ կ'առնենք, կը նայինք անցեալին եւ կը սկսինք մենք զմեզ հարց տալ՝ ինչպիսի՞ն կեանք մը ապրեցանք, ինչ շահեցանք, ինչ կորսնցուցինք, եւ ինչպէ՞ս կրնանք մեր կեանքի ընթացքը դէպի անելի լալը առաջնորդել:

Թուականի փոփոխութիւնը պատեհ առիթ մըն է, փնտռելու եւ գտնելու մեր ուղղութիւնը դէպի բարին ու ճշմարիտը: Անցեալը միշտ մեզի դաս մը սորվեցուցած է՝ երբեմն ցատով, երբեմն սուղ գին վճարելով, երբեմն ուրախութեամբ եւ օրհնութեամբ:

Անցեալի դասերուն եւ յուշերուն հիման վրայ, մենք զմեզ ինքնաքննութենէ անցընելով, կը սկսինք մեր կեանքը վերադասաւորել, սխալները սրբագրել, անցեալէն եկող վերքերը փարատել եւ կեանքի ընթացքը փոխել:

Չմնանք անցեալին մէջ, այլ ընդառաջ երթալով անցեալի բիծերը մաքրենք: Նոր տարուան շէմին «նորոգուած միտքերով նոր մարդ» ըլլանք, ինչպէս Պօղոս Առաքեալ կը թելադրէ, որպէսզի փորձառութեամբ ընտրենք լալը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ (հմմտ. Հռոմայեցիս 12.2):

Թող այս տարի մեր բոլորի սրտերը բացուին Տիրոջ դիմաց: Գոհունակութեամբ ու երախտագիտութեամբ յիշենք բոլոր այն օրհնութիւնները, զորս պարգեւած է մեզի եւ եկող տարին ալ յանձնենք իր նախախնամութեան ու կամքին:

Վստահինք Տիրոջ բարի կամքին ու Անոր հայրական գուրգուրանքին: Թող 2026 տարին լոյս եւ օրհնութիւն բերէ ամէն օճախի:

Թող ձեր տուները լեցուին Մտրաւծին Փրկչին պարգեւած խաղաղութեամբ:

Թող համայն մարդկութեան խաարած հոգիները լոյսով լեցուին ու քարացած սիրտերը հաւատքով: Խաղաղութիւն, սէր եւ համերաշխութիւն Ազգիս Հայոց...

Շնորհաւոր Նոր Տարի:

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

«Աստուած իր Հոգին մեզի տուաւ՝ որպէսզի մեր վախկոտութիւնը յաղթահարենք եւ զօրանանք, սիրով լեցուինք եւ զգաստ կեանք մը վարենք» (Բ. Տմ 1.7):

“For God gave us a spirit not of fear but of power and love and self-control.” (2 Timothy 1:7)





### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾՇՄԱՐԻՏ ԴԻՄԱԳԻԾԸ

Հայ Եկեղեցին իր դարատուր կեանքի ընթացքին լոկ աղօթավայր ու սրբավայր չեղաւ բազին ներ ըմբռնումով, այլ մեր հանճարին հնոցը, մեր ցեղային կառոյցին հիմը, մեր ազգային միութեան շաղախը, մեր անմահութեան մկրտարանը: Ան եղաւ Սահակ-Մեսրոպ, Կողբացի, Մանդակունի, Լամբրոնացի, Տաթեացի, այլ խօսքով ամբողջական մշակոյթ: Եղաւ Լուսատրիչ, Նարեկացի, Շնորհալի, այլ խօսքով՝ բոլորանուէր սրբութիւն ու ծառայութիւն: Եղաւ Կարմիր Վարդան, Ղետնդ Երէց, Աշտարակեցի, Խրիմեան, այլ խօսքով՝ պայքար ու հերոսութիւն: Ինչ են եղած մեր սուրի ու հուրի սրբամատեանի էջերը անմահացնող սրբազան պողթկումները, մեզ ժամանակի ժանգէն զերծ պահող ու դարերուն յանձնող մեր գերահրաշ բռնկումները, եթէ ոչ մեր սրբութեան տենչը, ծառայութեան սէրը, հերոսական կամքը ու ստեղծագործական կրակը՝ քրիստոնէական կրօնի շունչով ու ոգիով թրծուած: Եւ այս բոլորը Հայ Եկեղեցոյ կեանքէն ու գործէն բխող ու դարերու վրայ տարածուող մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ վաւերականօրէն թարգմանուող:

Հայ Եկեղեցին իր աստուածային առաքելութեան կողքին, ըսինք, բերաւ նաեւ իր ծառայութեան նպաստը հայ ցեղի յաւերժական խորհուրդին, հայ մշակոյթի ծաղկման ու յաւերժացման: Հայ հոգիին ու մտքին առանցքը անկէ անցաւ միշտ: Հայ ստեղծագործ ոգիին քուրան ան եղաւ միշտ: Հայ ոգեղէն համայնական հարստութեան գանձարանը Հայ Եկեղեցին հանդիսացաւ: Ու փոթորիկներ, ներքին թէ արտաքին, չկրցան քանդել զայն, առաքելախիմն այս հաստատութիւնը, որովհետեւ հայ հոգիին մէջ նետեց ան իր հիմերը, հոն հաստատեց իր թագաւորութիւնը, եւ ճիշդ անոր համար մնաց ան նոյնիսկ երբ մենք մեր հողէն ու երկնքէն կտրուեցանք, երբ աւազներու մէջ փոշիացանք:

Հայ Եկեղեցին Աստուծոյ շունչով ու խօսքով պահեց իր գոյութիւնը, անով ապրեցաւ դարեր շարունակ, ու իր ժողովուրդի ծառայութեան ու նահատակութեան ոգիովը, ճենճերող աղօթքին ու ստեղծագործ բազկին ուժովը զօրացաւ ու ուճացաւ: Ու հայութիւնը եղաւ ամուր, մէկ ու հօգօր՝ երբ Հայ Եկեղեցոյ գերագոյն անունին ու աստուածատիպ առաջնորդներուն ցուցմունքովը, լեզուովը, կիրքովը գործեց, ու հաւատքովը իր կեանքը զապանակեց: Բայց հայ հոգին խամբեցաւ, հայ կեանքի ստեղծագործ բազկերակը տարապայմանօրէն դանդաղեցաւ ու հայ կեանքը լճացաւ, երբ գտնուեցան հայեր որոնք իրենց կեանքի դռները փակ պահեցին Հայ Եկեղեցոյ լուսաշէն խորաններուն առջեւ, երբ պահ մը, իրենց հոգիին մէջ ցամքեցան հայ աղօթքի ու շարականի մրմունջներուն եւ խունկի բոյրերուն ընդմէջէն հոսող լոյսի, յոյսի ու հաւատքի երկնային կենարար առուակները:

Հայ Եկեղեցին հսկայ պատմութիւն մը կերտեց, ամբողջ ժողովուրդ մը անմահացուց, բայց ինք չդարձաւ պատմութիւն, այլ եղաւ կեանք, ներշնչման ու կենսունակութեան աստուածային մշտաժող աղբիւր: Չմնաց ան իր պատմական հնացեալ գոյավիճակին մէջ, իր կեանքը չպայմանաւորեց միայն անցեալով, այլ քալեց ան հայ ժողովուրդի պատմութեան ճամբով, ապրեցաւ հայ կեանքի կշռոյթով ու հայ սրտի զարկով:

Ու այսօր ալ Հայ Եկեղեցին մեզի համար խունկ ու մոմ ըլլալէ առաջ, աղօթք ու հաւատք ըլլալէ ետք, հայ մշակոյթն է, սրբաշունչ մեր մատենաները, յաւերժախօս մեր ձեռագիրները, արիւնով սրբացած Աւարայրը, յաւերժայաղթ Սարդարապատը, մեր փրկութեան լաստը կեանքի արիւնտու ծփանքներուն դիմաց, դարերէն եկող եւ մեզ գալիք դարերուն կապող ոսկեղէն կամուրջը եւ վերջապէս մեր Սրբութիւն Սրբոցը:

Ինչ կը բերենք մեր անցեալէն իբրեւ ժառանգութիւն ներկայի ու կտակ պագայի, իբրեւ սրբազան ասանդ յանձնելու գալիք սերունդներու գորգօրանքին, փանօք, բանակ, մակամ. ոչ մին եւ ոչ միւսը, այլ անոնցմէ վեր ու զանոնք վերացնող ոգեկանութիւն մը... Հայաստանեայց Եկեղեցին: Ան է մեր ներկան ու ապագան, մեր հոգեկան ու ազգային անկորնչելի հարստութեանց հաւատարիմ պահապանը, մեր գերագոյն ժառանգութիւնն ու փառքը, մեր ցեղային հաւասարակշռութիւնը պահող կեդրոնական սիւնը, մեր ազգային ինքնորոյն դիմագծի առողջ ու անաղարտ պահապանման, մեր գոյութեան ու գոյատեւման ամրակառոյց խարիսխը: Տակաւին հոն են, Հայ Եկեղեցոյ խորխորհուրդ կամարներու հովանիին տակ, բոլոր դարերուն ու բոլոր ժամանակներուն մեր մտքի ու հոգիի գերագոյն ընտրեալները, յաւերժութեան երկինքն ի վեր խոյացող հայկական լեռնապարի վերապագ ու յաւերժայոյս գագաթները իրենց երկաթագիր Մ. Բ. Գ. ու վ. երկնասլաց թռչններով ու հոգեկան փոթորկումներով, իրենց երկնաճանճանչ հանճարով, իրենց խաչով ու սուրով: Տակաւին հոն են, Հայ Եկեղեցոյ մէջ, մեր հողեղէն կառոյցը աստուածաստեղծ շունչով ու ոգիով թրծող մեր նահատակները, մեր սուրբերը, մեր հերոսները:

Ո՛վ կրնայ թերագնահատել Հայ Եկեղեցոյ կատարած ծառայութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր, ազգային, մշակութային ու նոյնիսկ քաղաքական կեանքէն ներս: Ծառայութիւն մը որ կարելի չէ չափել ու սահմանաւորել մարդկային չափանիշներով ու պատմութեան չոր տուեալներով. ծառայութիւն մը՝ որ եղաւ աստուածային վկայութիւն ու արեան գիտակից նահատակութիւն հայ ժողովուրդի ընդհանրական կեանքին մէջ թարգմանուող:

(Շարունակելի 2)

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԷՇԻՇԵԱՆ  
ԱՅԺՄ՝  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

### ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՄԵՐ ՄԷՋ ԱՃԵՑՆԵԼ

Մեր մէջ, նոր կեանքի մը համար ծնելու ներքին փափաքը կը զարգանայ, երբ վերահասու կ'ըլլանք, թէ Յիսուս աշխարհ եկաւ, որպէսզի մեր մահկանացու մարմիններուն անմահութիւն պարգեւէ: Արդարեւ, Յիսուսի հետ յափտենական կեանքը ապրելու ցանկութիւնը պէտք է մղէ յատուկ միջոցներով պատրաստուելու այդ կեանքին համար:

Ուստի, անհրաժեշտ է յարատեւօրէն մեր մէջ սնուցանել Յիսուսի Սուրբ Հոգիին կեանքը, որ յափտենական կեանքն իսկ է եւ որ արդէն իսկ մեր մէջ կը գտնուի: Մենք, մկրտութեամբ կը ստանանք այդ կեանքը եւ Սուրբ Հաղորդութիւնն ալ կը պահէ զայն: Աղօթքը, հսկումը, հոգեւոր ընթերցումներն խորացնենք եւ յստակեցնենք այդ հաւատքը:

Այն կեանքը, որ կ'ապրուի եւ կը նուիրականանայ Աստուծոյ Խօսքով, աստիճանաբար մեզ կը պատրաստէ հրաժարելու մահկանացու մեր մարմիններէն, եւ որդեգրելու ու կառչելու անմահութեան հաւատքին: Այսպէս ապրողներուն համար, մահը թշնամի չի համարուիր, այլ բարեկամ մը, որ մեզ իր ձեռքերուն մէջ առնելով կ'առաջնորդէ դէպի յափտենական սիրոյ թագաւորութիւն:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ  
ՀԵՆՐԻ Ճ. Մ. ՆՈՒՆԸ  
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան

### ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԽՆԴԻԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Սորվեցնր մեզի, ըվ Տէր, որ տեսնենք եւ օգտագործենք ծառայութեան ամէն պատեհութիւն, տանք՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարինք՝ առանց վիրաւորուելու, աշխատինք՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայենք՝ առանց վարձատրութիւն ակնկալելու. այն գիտակցութեամբ՝ թէ քու կամքը է որ կը կատարենք: ԱՄԷՆ:

Սուրբ Բարսեղ Կեսարացի

### A PRAYER FOR MERCY AND HELP

#### PSALM 86

Hear me, Lord, and answer me,  
for I am poor and needy.  
Guard my life, for I am faithful to you;  
save your servant who trusts in you.  
You are my God; have mercy on me, Lord,  
for I call to you all day long.  
Bring joy to your servant, Lord,  
for I put my trust in you.  
You, Lord, are forgiving and good,  
abounding in love to all who call to you.  
Hear my prayer, Lord;  
listen to my cry for mercy.  
When I am in distress, I call to you,  
because you answer me.  
Among the gods there is none like you, Lord;  
no deeds can compare with yours.  
All the nations you have made  
will come and worship before you, Lord;  
they will bring glory to your name.  
For you are great and do marvelous deeds;  
you alone are God.  
Teach me your way, Lord,  
that I may rely on your faithfulness;  
give me an undivided heart,  
that I may fear your name.  
I will praise you, Lord my God, with all my heart;  
I will glorify your name forever.  
For great is your love toward me;  
you have delivered me from the depths,  
from the realm of the dead.  
Arrogant foes are attacking me, O God;  
ruthless people are trying to kill me—  
they have no regard for you.  
But you, Lord, are a compassionate and gracious God,  
slow to anger, abounding in love and faithfulness.  
Turn to me and have mercy on me;  
show your strength in behalf of your servant;  
save me, because I serve you  
just as my mother did.  
Give me a sign of your goodness,  
that my enemies may see it and be put to shame,  
for you, Lord, have helped me and comforted me.



### ԵԿԵՂԵՑԻ ՄՏԱԾ ԱՏԵՆ

Ըստ ամենայն միտս անցանես, զխաղաղութիւն քո տուր մեզ հանապազ, զքեզ աղաչեմք:

Դուն, որ բոլոր միտքերը կը քննես, քու խաղաղութիւնդ տուր մեզի տեւաբար, կ'աղաչենք քեզի:

### ԵԿԵՂԵՑԻԷՆ ԵԼԱԾ ԱՏԵՆ

Երկնաւոր Թագաւոր, քու եկեղեցիդ անասան պահէ, եւ քեզի երկրպագողները խաղաղութեան մէջ պահէ:





## ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ ՃԱՇՈՒ ԺԱՄ, ԿԱՄ ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

### ՓԱՌՔ ՔԵՉ, ՏԵՐ

Աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք, ժողովուրդը (դպիրները) կ'աղաղակէ «Փանօք քեզ, Տէր Աստուած մեր»: Նոյն փառաբանութիւնը Աւետարանէն առաջ ալ կար, եւ Պատարագի կամ այլ արարողութեան մը ընթացքին, ամէն անգամ որ Աւետարանը կը կարդանք՝ կարդալէ առաջ ու ետք նոյն փառաբանութիւնն է որ կը կրկնենք, մեր երախտագին շնորհակալութիւնը յայտնելով Աստուծոյ, որ իր խօսքին հաղորդ դարձուց մեզ, եւ արժանի է մշտնջենաւոր փառաբանութեան:

Բայց այս հանգրուանին երգուած «Փառք քեզ Տէր»ը անմասն է՝ փառաբանութեան սրտաբուխ, անզպելի պողոթնում մը, որ Աւետարանով բարձրացած հոգիներէն ջրվեժի պէս բարձունքէն վար կը խուժէ, աստիճանաբար հանդարտելով, երթալ թաղուելու համար հաւատքի երկիւղածութեամբ լեցուած հոգիներու խորը:

Ուսուցողական եւ հոգեւոր ինքնապատրաստութեան այս հանգրուանը կը յատկանշուի երկու այլ իրողութիւններով, որոնցմէ առաջինը աստուածաշնչական պատգամն է, կամ այլ խօսքով՝ քարոզը:

Դժբախտաբար ներկայիս քարոզչութիւնը կը կատարուի «Հայ Մեր»էն առաջ, ինչ որ մէկ կողմէ կը խանգարէ Պատարագին կարգը, եւ միւս կողմէ՝ անտեղիորէն իրարմէ կը հեռացնէ օրուան աստուածաշնչական ընթերցումներն ու քարոզը, մինչդեռ այս վերջինը՝ բացատրութիւնը պէտք է ըլլայ առաջիններուն, եւ անոնց վրայ հիմնուած պէտք է ըլլայ օրուան պատգամը:

Միայն այս բացատրութենէն ու պատգամէն վերջն է, որ ժողովուրդը միահամուռ պէտք է արտասանէ «Հաւատամք»ը, որ իր հաւատքին խտացած խոստովանութիւնն է:

### ՀԱՒԱՏԱՄՔ

«Հաւատամք»ը սկզբիցն Պատարագին մաս չէ կազմած, թէպէտ այսօր կարելի չէ առանց անոր Պատարագը երեւակայել: Հաւանաբար, անիկա Պատարագին մէջ ներառուած է 5-րդ դարուն, 473 թուականին, Անտիոքի Պետրոս «Թափիչ» Պատրիարքին կողմէ, եւ յաջորդ դարուն որդեգրուած նախ՝ Յոյն (511 թ.) եւ ապա Լատին (589 թ.) եկեղեցիներուն կողմէ: Շատ հաւանական է ենթադրել, որ նոյնինքն 5րդ դարու վերջը կամ 6րդին սկիզբը անիկա մուտք գործած է նաեւ մեր Պատարագամատոյցին մէջ:

«Հաւատամք»ը Եկեղեցւոյ միութեան եւ միասնութեան դրսեւորումն է իր հաւատքին մէջ, այնպէս ինչպէս Ս. Հաղորդութեան խորհուրդը ինք Եկեղեցւոյ միութեան տեսանկիւնի եւ շօշափելի արտայայտութիւնն է՝ նոյն Քրիստոսի Մարմնին եւ Արեան ճաշակումով:

«Մէկ է Տէրը, մէկ՝ հաւատքը», կ'ըսէ Պօղոս Առաքեալ, «Մէկ է Մարմինը եւ մէկ՝ Սուրբ Հոգին, ինչպէս մէկ՝ Սուրբ Հոգին, ինչպէս մէկ է յոյսը՝ որուն հրաւիրեց ձեզ Աստուած» (Եփ 4.4-5): Առաքեալին յիշած Մարմինը Քրիստոսի Սուրբ Եկեղեցին է, որ մէկ է եւ անբաժանելի, հիմնուած մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վրայ, շնչաւորուած մէկ Հոգիով՝ Սուրբ Հոգիով, եւ որդեգրուած միակ Հօր մը՝ միակ Հօր Աստուծոյ, որ «Հայրն է ամենուն, որ կը տիրէ բոլորին, կը գործէ բոլորին ընդմէջէն, եւ կը մնայ բոլորին մէջ» (Եփ 4.6):

Արդ, Եկեղեցին ամբողջութիւնն է՝ ո՛չ թէ ազգի մը գաւակներուն, ո՛չ թէ նոյնախօս կամ նուազագոյն մարդոց, այլ՝ ամբողջութիւնն է Քրիստոսի հաւատացողներուն: Այս հաւատքին շուրջ միութիւնը անհրաժեշտ է, Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին կազմելու համար, ինչպէս հարկաւ՝ անոր իսկական անդամ ըլլալու համար:

Մենք չենք կրնար որեւէ բանի հաւատալով Քրիստոսի Եկեղեցին ճշմարիտ անդամ դաւանիլ մենք մեզ: Քրիստոսի Եկեղեցին Աստուծոյ կողմէ տրուած յայտնութեան անօթակիրն է, եւ այդ յայտնութեան երկու երեսները, ինչպէս ըսինք, Աստուածաշունչ Մատեանը եւ Մարմնացեալ Բանը՝ Քրիստոսն են: Արդ, անոնց կապակցութեամբ Եկեղեցւոյ եւ անոր անդամներուն հաւատքը պէտք է ըլլայ մէկ եւ նոյն, եւ հարկաւ պէտք է ըլլայ ճշմարիտ, ուղղափառ, որպէսզի իրենց միասնութիւնը ըլլայ կատարեալ միութիւն՝ սիրոյ նոյն համբոյրին մէջ:

Ժամանակ մը, Եկեղեցիներու մէջ սովորութիւն եղած էր (եւ կարգ մը տեղեր դեռ կը յամենայ) «Հաւատամք»ը արտասանելը ձգել Աւետարանը կարդացող Սարկաւագին, եւ ուստի կ'երգուէր առանձին: Անիկա երբեք ճիշդ չէ Արեւելեան եկեղեցիներու հասկացողութեամբ: «Հաւատամք»ը իր յոգնակի ձեւով իսկ՝ «Կը հաւատանք», կը յուշէ թէ ամբողջ Եկեղեցւոյ հաւատքի խոստովանութիւնն է, եւ իբրեւ այդպիսին՝ զայն պէտք է արտասանեն բոլոր հաւատացեալները անխտիր, ինչ որ իր կարգին կը նշանակէ՝ թէ իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է զայն գոց գիտնայ անպայման:

### ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Մարգարեական եւ առաքելական գիրքերէն քաղուած ընթերցումը կը կատարուի դասի կեդրոնէն, այսինքն՝ «վար»էն, ժողովուրդին մէջէն: Անիկա իր յատուկ իմաստը ունի: Մարգարէներն ու առաքեալները աշխարհի մէջ ներկայացուցիչը եւ արձագանգն են աստուածային ձայնին. առաջինները իբրեւ «յառաջագոյն տեսանողները» Աստուծոյ Որդւոյն աշխարհ գալուստին ու մեր փրկութեան, իսկ երկրորդները՝ իբրեւ «աւետաւորներն ու սպասաւորները Բան Աստուծոյ»:

Մինչդեռ, Աւետարանը պէտք է անպայմանօրէն Ս. Բնմէն կարդացուի: Անով՝ մարմնացեալ մեր Աստուածը ինք է որ ուղղակիորէն կը խօսի մեզի: Անոր համար է, որ զայն կարդալէ առաջ Սարկաւագը կը հրահանգէ՝ «Երկիւղածութեամբ լուարուք» (=երկիւղածութեամբ լսեցէք), իսկ ժողովուրդը (ներկայիս՝ դպիրները) երկիւղածութեամբ կ'ըսէ. «Ասէ Աստուած» (=Աստուած կը խօսի):

(Շարունակելի 6)  
«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,  
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ  
ԶԱՐԵՑ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

### ՓՐԿԻԶԻՆ ԳԱԼՈՒՍԵԸ ԿԱՄ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ

#### ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍԱՆՑԱԾ ՓՐԿԻԶԸ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵՍԻԱՆ ԱՇԽԱՐԸ ԵԿԱՄՆ:

Այո, աշխարհ եկաւ Մեսիան՝ մեր Փրկիչը, Յիսուս Քրիստոս:

#### Ո՛Վ Է ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

Յիսուս Քրիստոս Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ անձն է, այսինքն՝ Որդի Աստուածը:

#### ՔՐԻՍՏՈՍ ԵՐԲ ԱՇԽԱՐԸ ԵԿԱՄ:

Քրիստոս աշխարհ եկաւ, երբ հրեաներուն երկիրը հոռմայեցիներուն իշխանութեան տակ էր:

#### ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ ԿԱՅՍՐԸ ԱՅՆ ԱՍԵՆ Ո՛Վ ԷՐ:

Հոռմայեցիներուն կայսրը այն ատեն Օգոստոսն էր, եւ իր կողմէ հրեաներու թագաւոր նշանակուած էր Հերովդէս Եդոմայեցին:

#### ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ ԻՆՉՊԷՍ ԱՇԽԱՐԸ ԵԿԱՄ:

Որդին Աստուած աշխարհ եկաւ մարմին առնելով, այսինքն՝ մեզի պէս մարդ դառնալով:

#### ՈՐՄԷ ՄԱՐՄԻՆ ԱՌԱՒ:

Աստուած մարմին առաւ Մարիամէն, որ Յովակիմին եւ Աննային աղջիկն էր եւ նշանուած էր Յովսէփ անունով արդար մարդու մը հետ:

#### ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ՈՐՈ՛ՒՆ ՑԵՂԷՆ ԷՐ:

Սուրբ Կոյս Մարիամ Յուդայի ցեղէն, Դաւիթ մարգարէին սերունդէն էր:

#### ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ Ո՛ՒՐ ԿԸ ԲՆԱԿԷՐ:

Սուրբ Կոյս Մարիամ Յովսէփին հետ Գալիլիոյ Նազարէթ քաղաքը կը բնակէր:

#### ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԴԵՂԱՑՈՒՄԸ ԻՆՉՊԷՍ ԵՂԱՒ:

Գաբրիէլ հրեշտակապետը Աստուծոյ կոմէ Մարիամին աւետեց, թէ որդի մը պիտի ծնի եւ անոր անունը Յիսուս պիտի դնէ:

#### ՀՐԵՇՏԱԿԸ ԻՆՉ ԸՍԱՒ ՄԱՐԻԱՄԻՆ:

Հրեշտակը այսպէս ըսաւ. «Ուրախացիր շնորհալի կոյս, որովհետեւ Աստուած քեզի հետ է» (Դկ 1.28):

#### ԻՆՉ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՄԱՐԻԱՄ:

Մարիամ այսպէս պատասխանեց. «Աստուծոյ աղախինն եմ, թող քու ըսածը ըլլայ» (Դկ 1.38), եւ յղիացաւ:

#### ՈՒՐԵՄՆ՝ ՄԱՐԻԱՄԻՆ ԿՐՆԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ ԸՍԵԼ:

Սուրբ Մարիամ անտարակոյս Աստուածամայր է, որովհետեւ իր ծնած որդին ո՛չ միայն մարդ էր, այլեւ Աստուած եւ Աստուծոյ Որդի էր:

## ՆՈՐ ՏԱՐԻ

Ռափայել Պատկանեան  
Երնէկ թէ այս նոր տարին  
Վերջ տար հայի ցաւերին,  
Չարը կորչէր ու բարին  
Բոյն դներ մեր սրտերին:

Երնէկ թէ այս նոր տարին  
Ազատ շնչէր Հայաստան,  
Եւ շուրջ Մասիս մեր սարին  
Փայլէին արտ անդաստան:

Երնէկ թէ այս նոր տարին  
Հայ ազգն ի մի գումարուէր,  
Ի գլուխ Կարնոյ հայ ամրին  
Հայի դրօշակ ծածանէր:

Երնէկ թէ այս նոր տարին  
Ողբի կանգներ Հայաստան,  
Եւ կիսաքանդ մեր Կարին  
Լինէր քաղաք մեր ուստան:

Հայեր, երբեք չերկմտիք,  
Կը կատարուի այս ամէն,  
Եթէ ի սպառ մենք հանենք  
Փոքրոգութիւն մեր սրտէն:





## ՆԻԿԻՈՅ ՏԻԵՂԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

«ՅԵՐՐՈՐԴ ԱՌՈՒՐ ՅԱՐՈՒՑԵԱԼ  
ԵԼԵԱԼ Ի ՅԵՐԿԻՆՍ ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎՆ՝  
ՆՍՏԱԻ ԸՆԴ ԱՋՄԷ ՀՕՐ»:

### 1. Քրիստոսի յարութեան կեդրոնական նշանակությունը մեր հաւատքին համար:

Քրիստոնէական հաւատքին հիմնաքարն է Քրիստոսի յարութիւնը, առանց որուն չկայ եւ չի կրնար ըլլալ մեր հաւատքը: Հիշող այդ մեծագոյն կարեւորութեան համար է, որ մենք Քրիստոսի Եկեղեցին կը հասկնանք իբրեւ Քրիստոսի յարութեան վկայող Մարմին: Դարձեալ ատոր համար է որ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՛ զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը» (Ա. Կր 15.14):

### 2. Երրորդ օրը:

Ըստ օրացուցային հաշումներուն, եւ ըստ Եկեղեցոյ պահած ասանդութեան, Քրիստոսի խաչելութեան տարին, 30 թուականին, Հրէական Չատիկը Հինգշաբթի օր մըն էր: Արդ, Վերջին Ընթրիքը տեղի ունեցաւ Հինգշաբթի արեւմարէն անմիջապէս ետք, երբ հրէական օրացոյցին համաձայն կը սկսէր Նիսան ամսուն 15-ը, այսինքն՝ Չատիկի տօնը: Նոյն իրիկունը եւ գիշերը տեղի ունեցան ձերբակալութիւնը, դատավարութիւնը եւ չարչարանքները, եւ առտու կանուխ տրուեցաւ մահապահովը: Խաչելութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ առտու ժամը իննին, իսկ կէսօրէ ետք ժամը երեքին Յիսուս ասանդեց իր հոգին, եւ յաջորդ երկու ժամերուն ընթացքին խաչէն իջեցուցաւ եւ դրուեցաւ գերեզման:

### 3. Քրիստոսի յարութիւնը՝ պատմութեան մեծագոյն հրաշքը:

Քրիստոսի յարութիւնը ապացոյցն է իր աստուածութեան: Մարդիկ կրնային չհաւատալ իր խօսքերուն, եւ շատեր չհաւատացին: Իբրեւ գերագոյն հրաշք եւ իբրեւ գերագոյն ապացոյց Քրիստոս անոնց ընծայեց իր մահը եւ յարութիւնը, որոնք նախագուշակուած էին Աստուածաշունչին մէջ:

### 4. Քրիստոսի յարութեան անհերքելի իրականութիւնը:

Աւետարանները բոլորն ալ, եւ ամբողջ ՆԿ-ը կը վկայեն Քրիստոսի յարութեան: Քրիստոս ինք բազմաթիւ առիթներով խօսեցաւ իր չարչարանքներուն, մահուան, երեքօրեայ թաղման եւ յարութեան մասին, սկիզբէն իր աշակերտներն ու հետետորդները նախապատրաստելու համար այս կարեւոր իրականութեան: Ղուկաս Աւետարանիչ կը պատմէ, թէ իր յարութենէն ետք Քրիստոս երկու առիթներով իր աշակերտներուն խօսեցաւ ՀԿ-ին մէջ իր չարչարանքներուն, մահուան եւ յարութեան կապակցութեամբ գրուածներուն եւ անոնց կատարումին մասին (Ղկ 24.25-27 եւ 44.47):

### 5. Պէտք էր իրականանային գրուածները:

Ինչ էին «Օրէնքի գիրքին, մարգարէական գիրքերուն եւ Սաղմոսներուն մէջ» այս մասին գրուածները: Այդ նախագուշակումներէն մէկ-երկուքը բացայայտ հաստատումներ են, միւսները ակնարկութիւններ, բայց որոնք մեկնութիւնը անխուսափելիօրէն մեզ կը յանգեցնէ նոյն իրականութեան: Տե՛ս Աղ 69.5 եւ հմմտ 15.25: Տե՛ս Աղ 41.10 եւ հմմտ Մտ 10.4: Տե՛ս Ձք 11.12-13 եւ հմմտ Մտ 26.14-16 եւ 27.3-10: Տե՛ս Ձք 13.7 եւ հմմտ Մտ 26.31: Տե՛ս Ես 53.10-12 եւ հմմտ Մտ 27.12-14 եւ Ա. Պտ 2.21-25: Տե՛ս Ես 50.6 եւ հմմտ Մտ 26.67 եւ 27.26: Տե՛ս Աղ 22.8 եւ հմմտ Մտ 27.29-30: Տե՛ս Աղ 22.17 եւ հմմտ Ղկ 23.33: Տե՛ս Աղ 22.18 եւ հմմտ Մտ 27.35: Տե՛ս Աղ 69.22 եւ հմմտ Յհ 19.28: Տե՛ս Ձք 12.10 եւ հմմտ Յհ 19.37: Տե՛ս Աղ 36.1 եւ հմմտ Ղկ 23.46: Տե՛ս Ամս 8.9 եւ հմմտ Մտ 27.45: Տե՛ս Ելք 12.46 եւ հմմտ Յհ 19.33 եւ 36: Տե՛ս Ես 53.12 եւ հմմտ Մտ 27.38: Տե՛ս Ես 53.9 եւ հմմտ Մտ 27.57-60: Տե՛ս Աղ 16.10 եւ հմմտ Գրծ 2.29-31: Տե՛ս Աղ 68.19 եւ հմմտ Գրծ 1.9 եւ Եփ 4.8: Տե՛ս Աղ 110.1 եւ հմմտ Մր 16.19, Գրծ 2.34 եւ Եբր 1.3:

### 6. Քրիստոս ինք յարութիւն առաւ թէ՛ Հայրը զայն յարուցանեց:

Աստուածաշունչը երկու կարգի վկայութիւններ ունի: Բնագիրներուն մէկ մասը կ'ըսէ թէ Հայրը յարուցանեց Քրիստոսը, իսկ միւս մասը կ'ըսէ՝ թէ Քրիստոս ինք յարութիւն առաւ: Բայց ռեւէ գատորոշում ձեւակաւ է. Որդին Հօրմէն անբաժան է, եւ անոր հետ մէկ (Յհ 10.30): Չկայ աստուածային ռեւէ գործ կամ կարողութիւն, որ Որդին չունենայ, ինչպէս որ ինքը ըսաւ. «Ինչ որ Հայրս ունի՝ իմն է» (Յհ 16.15): Հօրը գործը իրն է, եւ իր գործը՝ Հօրը: Հետեալբար չի կրնար ըլլալ որ յարութիւնը Հօրը գործը ըլլայ, եւ միաժամանակ չբլայ Որդիին գործը: Ատիկա միեւնոյն ատեն ամենասուրբ Երրորդութեան վերաբերող անհերքելի ճշմարտութիւն մըն է, կապուած նաեւ Ա. Հոգիին (Հո 1.3-4):

### 7. Յարուցեալ մարմինը՝ նոյն մարմինը:

«Յարութիւն» բառը ինքնին ցոյց կու տայ, թէ խօսքը կը վերաբերի նոյն այն մարմինին կամ անձին, որ մեռած էր եւ հիմա յարութիւն կ'առնէ: Յատակ է, հետեալբար, որ երբ կը խօսինք «յարուցեալ մարմին»-ի մը մասին, այդ նոյն մարմինը նախապէս մեռած մարմինը պէտք է ըլլայ: «Նոյն մարմինը» հաստատումը այստեղ պարզապէս կ'ուզէ ըսել, որ յարուցեալ մարմինը նախկինէն տարբեր է նոր մարմին մը չէր, ոչ ալ անիրական եւ երեւութական մարմին մըն էր: Այլ՝ նոյն այն մարմինն էր, որ Քրիստոս նախապէս ունէր, եւ այս յարուցեալ մարմինը նոյնքան իրական ու ճշմարիտ մարմին մըն էր, միտով ու ուկորով, տեսանելի ու շօշափելի (տե՛ս Ղկ 24.39: Յհ 20.27): Միւս կողմէ, սակայն, Պօղոս առաքեալ մեզի կը բացատրէ՝ թէ ինչ է տարբերութիւնը յարութենէն առաջ մեր սովորական մահկանացու մարմինին, եւ յարութենէն ետք նոյն այդ մարմինին ձեռք բերած նոր վիճակին, որ կը կոչենք «փառաւորեալ» վիճակ: Այժմ մեր մարմինները «շնչաւոր» են, եղծանելի, անարգ, տկար, մահկանացու, յարութենէն ետք պիտի ըլլան՝ «հոգեւոր», անեղծ, փառաւոր, զօրաւոր եւ անմահ (տե՛ս Ա. Կր 15.42-44): Այս բոլորով հանդերձ, տարբեր մարմիններ պիտի չըլլան, այլ նոյն մարմինը որ նախապէս ունէինք, եւ որ Աստուած սկիզբէն սահմանած էր յարութեան:

### 8. Նոյն մարմինով երկինք ելաւ:

Կարգ մը աղանդաւորներ կ'ըսէին, թէ Քրիստոս մարմինով չէր որ երկինք համբարձաւ: Մարմինը իրեն հետ երկինք չտարաւ, կ'ըսէին անոնք, այլ օդին մէջ տարրալուծեց, կամ լուսատուներէն մէկուն վրայ ձգեց: Հաւատարմը ինչպէս մարդեղութեան մէջ կը շեշտէր Քրիստոսի աստուածութեան եւ մարդկութեան անբաժանելի եւ անշփոթ միաւորութիւնը, նոյնպէս կը դաւանի, թէ յարութենէն ետք նոյն միաւորութիւնը մնաց անբաժանելի, Մարդու Որդի եղած Աստուածորդին իր մարմնով համբարձաւ երկինք:

### 9. Հօրը աջ կողմը նստաւ:

Աջ կողմը նստիլը՝ նշանակ է պատիւի, փառաւորութեան, հաւասարապատուութեան: Ասով Աստուածաշունչը յատկօրէն կը յայտնէ, թէ Որդին աթոռակից եւ փառակից է Հօրը (Յհ 6.61-62: Հմտ Ղկ 22.66-69: Կղ 3.1: Եբր 8.1):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՅՑ ՀԱՒԱՍԱՄՔԻՆ  
Չարեհ Արք. Ազնաւորեան  
(Շարունակելի 9)

## THE BOOK OF PROVERBS

WRITTEN: OVER A LONG PERIOD OF TIME,  
POSSIBLY COLLECTED AROUND 800-700BC

### WHAT YOU NEED TO KNOW:

Proverbs is like a little library of parables and wise advice for living. Many of the proverbs are said to have been written by King Solomon, who was renowned for his wisdom. This is not a book of instructions or enforced rules; instead, it is a collection of guidelines and thoughts on how to live in a way that pleases God, loving God's path and making wise decisions.

### WHY READ IT?

There's loads of great advice and wisdom in this book that is still applicable to us today. The book helps us to think about how to be wise in our own lives. The proverbs cover things like speaking well of others, not being greedy, being calm, loving God and putting others first.

### SPOTLIGHT:

You can read about an example of Solomon's wisdom in 1 Kings 3.16-28, which tells the story of two women and their argument.

THE PROVERBS WERE WRITTEN BY A  
NUMBER OF AUTHORS, BETWEEN  
AROUND 900 AND 700BC

## THE LETTERS 1 PETER

WRITTEN: PROBABLY TOWARDS THE END OF THE FIRST  
CENTUARY AD

### WHAT YOU NEED TO KNOW:

This is the first of two letters said to have been written by Peter, a disciple of Jesus. The letter was written to believers suffering severe persecution, which was happening wherever there were Christians at the time. Believers were being treated horrendously because of their Christian faith by both the Jews and the Romans. They were oppressed and sometimes even killed. Peter writes about encouragement in the face of opposition to motivate believers to stand firm and pursue holiness.

### WHY READ IT?

1 Peter gives us encouragement in the times when it feels difficult to be a Christian – when we are made fun of, people treat us badly, or we feel scared about how people might react to us as Christians. The letter is filled with the recognition that Jesus suffered and said we would have trouble in our lives too, but that Jesus gives us comfort in our struggles.

### KEY CHARACTER:

Simon Peter was one of Jesus' 12 disciples and was an uneducated fisherman from Galilee. 'Peter' means 'rock', and was a nickname given to him by Jesus. We read many stories about him in the four Gospels, including his attempt to walk on water and his denial of Jesus. In the end, Peter stuck to his beliefs and was killed by the Romans for his faith.

